ժ) Հայտարարություն այն մասին, որ ՀՀ-ում, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, ֆիզիկական անձի կողմից ավանդի դիմաց ստացված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ՝ 10.00% դրույքաչափով:

ի) Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ. 1,000 ՀՀ դրամը 1 տարի ժամկետով, 6.00% տարեկան տոկոսադրույքով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում, առանց ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման, անվանական տոկոսադրույքով հաշվարկման դեպքում Ձեր եկամուտը կկազմի 61.00 ՀՀ դրամ: Տոկոսների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. 1,000x6.00%/365, ստացված թիվը կլինի օրական տոկոսի չափը (տվյալ օրինակում 0.16438ՀՀ դրամ): Այնուհետև 0.16438x30-ով (յուրաքանչյուր ամիսը պայմանականորեն հաշվենք 30 օր): Ֆիզիկական անձանց գծով հաշվարկված տոկոսագումարից պահվում է 10.00% եկամտային հարկ: Տվյալ դեպքի համար ստացված տոկոսագումարից (տվյալ օրինակում 4.93 ՀՀ դրամ) գանձվում է 10.00% եկամտային հարկը՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն, այսինքն՝ 4.93 – 0.49 = 4.44: Այնուհետև ստացված 4.99 ՀՀ դրամը գումարվում է նախնական ներդրված 1,000 ՀՀ դրամ գումարին և միևնույն գործողությունը կատարվում է 1,004.44ՀՀ դրամ գումարի համար: Շարունակաբար յուրաքանչյուր ամսվա ստացված եկամուտը գումարվում է հիմնական գումարին և կրկին կատարվում է նույն հաշվարկը: Արդյունքում, 1 տարվա համար ֆիզիկական անձանց համար եկամուտը կկազմի է 61.00 ՀՀ դրամ: Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս թե որքան եկամուտ կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

լ) Երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ընթացիկ հաշիվների համար գործող պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

խ) Բանկային ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

ծ) Ելնելով Բանկի կողմից որդեգրած քաղաքականությունից՝ ավանդի հաշվում ավանդատուի անունով չեն կարող մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները:

կ) Ելնելով Բանկի կողմից որդեգրած քաղաքականությունից՝ Բանկը երրորդ անձի անունով ավանդ չի ընդունում:

Սույն կետում ներկայացված են տոկոսադրույքների և ժամկետների օրինակներ և դրանք կարող են չհամապատասխանել Բանկի կողմից տվյալ պահին գործող տոկոսադրույքներին և ժամկետներին:

III. Հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգի, պայմանների և սահմանափակումների, ինչպես նաև ավանդատուի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն.

Ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության, նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննության, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման և ֆինանսական միջնորդության ավելացման նպատակով, 02.08.2008թ. ուժի մեջ է մտել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը:

1. Ֆինանսական համակարգի հաշտարարը անվճար կարգով քննում է այն պահանջները, որոնք ներկայացվում են հաճախորդի կողմից Բանկի դեմ, կապված են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10,000,000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

2. Հաճախորդն իրավունք ունի դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրով նախատեսված է, թե ոչ: Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու հաճախորդի իրավունքը սահմանափակող համաձայնությունը կամ պայմանն օրենքով առ ոչինչ է:

3. Մինչև պահանջը Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելը հաճախորդը պետք է Բանկին ներկայացնի բողոք-պահանջ:

4. Բանկը պարտավոր է հաճախորդի կողմից բողոք-պահանջը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին գրավոր տրամադրել վերջնական պատասխան, որում պետք է հստակ արտահայտված լինի Բանկի դիրքորոշումը սպառողի պահանջը մերժելու, բավարարելու կամ մասնակի բավարարելու վերաբերյալ:

5. Բանկի վերջնական պատասխանը ստանալու պահից կամ 4-րդ կետով սահմանված ժամկետում այն չստանալու դեպքում հաճախորդն իրավունք է ձեռք բերում պահանջ ներկայացնելու Ֆինանսական համակարգի հաշտարարին:

6. Բանկը պարտավոր է քննարկել հաճախորդի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է 1 տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ հաճախորդն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

7. Ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է գրավոր պահանջը, եթե հաճախորդը պահանջ է ներկայացրել 6 ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ հաճախորդը ստացել է Բանկի վերջնական պատասխանը կամ 4-րդ կետով սահմանված ժամկետում վերջնական պատասխան չի ստացել:

8. Այն դեպքում, երբ պահանջը ենթակա չէ քննության, Ֆինանսական համակարգի հաշտարարը 7 աշխատանքային օրվա ընթացքում մերժում է պահանջի քննումը և այդ մասին գրավոր տեղեկացնում է հաճախորդին՝ նշելով մերժման հիմքերը:

9. Ֆինանսական համակարգի հաշտարարը պահանջը քննում և որոշում է կայացնում Բանկի բացատրությունները ստանալուց հետո՝ 14 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես բարդ գործի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է սույն կետով նախատեսված 14-օրյա ժամկետը իր որոշմամբ երկարաձգել ևս 14 աշխատանքային օրով:

10. Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է պահանջի քննությունն իրականացնել բանավոր լսումների և (կամ) փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության հիման վրա: Կողմերի կամ դրանցից մեկի խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ: Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է հրավիրել կողմերին՝ վերջիններիս բանավոր բացատրություններն ու պարզաբանումները ստանալու նպատակով: Պահանջի քննությունը բանավոր լսումների միջոցով իրականացվելու դեպքում կողմերը նախապես պատշաճորեն իրազեկվում են պահանջի քննության օրվա և վայրի մասին:

11. Պահանջի քննության արդյունքներով Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում պահանջը բավարարելու կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու մասին և նույն օրը այն հանձնում կողմերին կամ փոստով առաքում որոշմանբ մեկական օրինակ:

12. Այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր: 30 աշխատանքային օրը լրանալուց հետո Ֆինանսական համակարգի հաշտարարը պարտավոր է Բանկին ծանուցնել հաճախորդի գրավոր համաձայնության առկայության կամ

բացակայության մասին և համապատասխանաբար` որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու կամ այդպիսին չդառնալու մասին:

13. Այն դեպքում, երբ հաճախորդը օրենքով սահմանված կարգով համաձայնվում է որոշման հետ, իսկ Բանկը սահմանված կարգով և ժամկետում չի կատարում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, հաճախորդն իրավունք է ստանում կատարողական թերթ ստանալու նպատակով դիմելու իրավասու դատարան:

14. Ֆինանսական համակարգի հաշտարարի` կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

15. Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը իրավասու դատարան կարող է ներկայացվել ծանուցումն ստանալուց հետո` մեկ ամսվա ընթացքում:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ **ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ** ԱՎԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի Հաճախորդ, տեղեկացնում ենք, որ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն իրավունք ունի փոփոխել սույն ամփոփագրում ընդգրկված տեղեկությունները՝ ապահովելով այդ փոփոխությունների մասին հաճախորդների պատշաճ ծանուցումը: Սույն ամփոփագրի վերաբերյալ հարցեր առաջանալու դեպքում խնդրում ենք դիմել մեզ՝ Բանկի տնային կայքում տեղակայված Հաճախորդի սպասարկման պորտալում առցանց դիմում ուղարկելու, Բանկ զանգահարելու, էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելու կամ Բանկ այցելելու միջոցով՝ ստորև նշված կապի միջոցներով.

| | |
|---|---|
| Բանկի անվանում | ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ |
| Հասցե | ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 10 |
| Հեռախոսահամար | (+374 60) 757 000<br>(+374 11) 757 000 |
| Ֆաքս | (+374 10) 529 591 |
| Կայք | www.armswissbank.am |
| Էլեկտրոնային փոստի հասցե | info@armswissbank.am |

30.08.2021թ.

## I. Տեղեկատվություն սակագների և տուժանքների մասին՝

ա) Հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագների և տուժանքների նկարագրությունը, չափերը (կամ դրանց հաշվարկման մեթոդը) և կիրառման դեպքերը, կարգն ու պայմանները՝

Ժամկետային ավանդի ժամկետը լրանալուց հետո, ավանդի մայր գումարը փոխանցվում է ավանդատուի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) առկա բանկային հաշվին: Ավանդի վրա հաշվեգրված և ավանդատուին վճարված տոկոսագումարները նույնպես փոխանցվում են ավանդատուի բանկային հաշվին:

Բանկային հաշվին վերոնշյալ գումարները մուտքագրվելուց հետո, դրանց նկատմամբ տարածվում են ֆիզիկական անձանց բանկային հաշվի սպասարկման և փոխանցումների իրականացման համար Բանկի կողմից սահմանված և գործող սակագներն ու միջնորդավճարները:

Ստորև ներկայացված են Բանկի կողմից սահմանված և գործող սակագները՝

Ուժի մեջ է 01.02.2020թ.-ից

| No. | Ծառայություն | Սակագին |
|---|---|---|
| *1.* | *Պարտադիր նվազագույն միջին օրական մնացորդ կամ մասնակցություն Բանկի ավանդային, ներդրումային, վարկային ծրագրերում* | |
| | ▪ *Ռեզիդենտների համար* | *AMD 10,000,000 կամ համարժեք այլ ազատ փոխարկվող արտարժույթ* |
| | ▪ *Ոչ ռեզիդենտների համար* | *AMD 20,000,000 կամ համարժեք այլ ազատ փոխարկվող արտարժույթ* |
| *2.* | ***Հաշվի բացում*** | |
| | Ընթացիկ հաշվի բացում ռեզիդենտնեի համար | անվճար |
| | Ընթացիկ հաշվի բացում ոչ ռեզիդենտնեի համար | AMD 50,000 |
| | Ընթացիկ հաշվի բացման սակագինը գանձվում է առաջին հաշվի բացման համար, երկրորդ և հաջորդող հաշիվները բացվում են անվճար: Յուրաքանչյուր հաճախորդի համար ՀՀ դրամով հաշվի բացումը պարտադիր է: | |
| | Ավնադային հաշվի բացում | անվճար |
| | էսքրոու հաշվի բացում և սպասարկում, պայմանագրի պայմանների փոփոխություն | գործարքի գումարի 0.20%, նվազագույնը՝ 50,000, առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ,<br>յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագրի համար՝ 25,000 ՀՀ դրամ |
| | Դեպո հաշվի բացում | |
| | ▪ *Պետական պարտատոմսերի հաշվառման դեպո հաշիվ* | *անվճար* |
| | ▪ *Այլ դեպո հաշիվների բացում* | *պայմանագրային* |
| *3.* | ***Հաճախորդի վերաակտիվացում **** | ***անվճար*** |
| | * 1 տարվա ընթացքում հաճախորդի բոլոր հաշիվներով զրոյական շարժի և վերջինիս կողմից Բանկի որևէ ծառայությունից չօգտվելու դեպքում հաճախորդի հաշիվներն ապաակտիվացվում են փակվում | |
| *4.* | ***Ընթացիկ հաշվի չնվազող մնացորդ*** | ***չի պահանջվում*** |
| *5.* | ***Տոկոսների հաշվարկում ընթացիկ հաշվի մնացորդի վրա*** | |

| | | |
|---|---|---|
| | ▪ *ՀՀ դրամով* | *պայմանագրային* |
| | ▪ *Արտարժույթով* | *պայմանագրային* |
| Տոկոսագումարի հաշվարկն իրականացվում է ամսեկան միջին օրական մնացորդի նկատմամբ, եթե այն կազմում է նվազագույնը 500,000 ՀՀ դրամ կամ 2,000 ԱՄՆ դոլար, 2,000 Եվրո, 150,000 ՌԴ ռուբլի: | | |
| *6.* | ***Հաշվի սպասարկում*** | |
| | ▪ *ՀՀ դրամով* | *անվճար* |
| | ▪ *Արտարժութային* | *անվճար* |
| *7.* | ***Հաճախորդների սպասարկում*** | |
| | ▪ *Ռեզիդենտների համար* | *անվճար* |
| | ▪ *Ոչ ռեզիդենտների համար* | *AMD 5,000 ամսական, գանձվում է միանվագ ամբողջ տարվա համար* |
| *8.* | ***Հաշվի քաղվածքի տրամադրում*** | |
| | Առձեռն բանկում | |
| | ▪ *Յուրաքանչյուր գործարքի ավարտից հետո* | *անվճար* |
| | ▪ *Ամսական քաղվածքի տրամադրում* | *անվճար* |
| | Պատվիրված նամակով | փոստային ծախսեր |
| | Ֆաքսով (ՀՀ տարածքում) | AMD 1,500 |
| | Ֆաքսով (ՀՀ տարածքից դուրս) | AMD 3,000 յուրաքանչյուր էջի համար |
| | Բանկ-Հաճախորդ համակարգով | անվճար |
| | Էլեկտրոնային փոստով | անվճար |
| *9.* | ***Հաշվից քաղվածքի կրկնօրինակի տրամադրում*** | |
| | Առձեռն բանկում | |
| | ▪ *Մինչև 6 ամիս վաղեմության* | *AMD 2,000* |
| | ▪ *Մինչև 12 ամիս վաղեմության* | *AMD 3,000* |
| | ▪ *12 ամսից ավելի վաղեմության* | *AMD 5,000* |
| | Էլեկտրոնային փոստով | անվճար |
| *10.* | ***Լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկանքների տրամադրում հաշվի և հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ, լիազորագրերի պատրաստում*** | |
| | Հիփոթեքային վարկերի գծով եռամսյակի ընթացքում վճարված տոկոսագումարիների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում | AMD 500 |
| | Այլ տեղեկանքի տրամադրում | |
| | ▪ Առձեռն բանկում | AMD 1,500 |
| | ▪ Պատվիրված նամակով | AMD 1,500 + փոստային ծախսեր |
| | ▪ Ֆաքսով (ՀՀ տարածքում) | AMD 2,000 յուրաքանչյուր էջի համար |

| | | |
|---|---|---|
| | ▪ Ֆաքսով (ՀՀ տարածքից դուրս) | AMD 3,000 յուրաքանչյուր էջի համար |
| | ▪ էլեկտրոնային փոստով | AMD 1,500 |
| | Լիազորագրի պատրաստում | AMD 3,000 |
| | 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերի սակագներում ԱԱՀ-ն ներառված է | |
| *11.* | *Ընթացիկ հաշվի փակում* | *անվճար* |
| *12.* | *Բանկ-Հաճախորդ համակարգ* | |
| **12.1** | **Internet Banking** | |
| | Գաղտնագրությամբ կոդեր ձևավորող հատուկ սարք | AMD 6,000 (միանվագ յուրաքանչյուր օգտագործողի համար) |
| | Գաղտնագրությամբ կոդեր ձևավորող մոբայլ սարք (ծրագիր) | անվճար |
| | Տարեկան սպասարկման վճար | անվճար |
| | Սարքի կորստի դեպքում լրացուցիչ սարքի տրամադրում | AMD 10,000 |
| | Հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու հնարավորություն առանց սարքի տրամադրման | անվճար |
| **12.2** | **Bank-Client** | |
| | ▪ *Սպասարկում* | *AMD 6,000 ամսական* |
| | ▪ *Հաճախորդի ուսուցում* | *անվճար* |
| *13.* | *Գործառնություններ կանխիկ դրամով* | |
| | Չեկային գրքույկի տրամադրում | AMD 5,000 |
| | Ընթացիկ հաշվից կանխիկ գումարի ելքագրում | |
| | **ՀՀ դրամով** | |
| | ▪ *հաշվին կանխիկ միջոցների մուտքագրված չափով* | *անվճար* |
| | ▪ *հիպոթեքի պայմանագրի առուվաճառքի՝ վերջնական շահառուին փոխանցված գումարի չափով* | *անվճար* |
| | ▪ *ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսագումարներից* | *անվճար* |
| | ▪ *էքրոու հաշվին կանխիկ մուտքագրված դրամական միջոցների չափով՝ անկախ շահառուին այդ միջոցների վճարման եղանակից (կանխիկ կամ անկանխիկ)* | *անվճար* |
| | ▪ *անկանխիկ միջոցներից* | *0.20%* |
| | **ԱՄՆ դոլարով** | |
| | ▪ *հաշվին կանխիկ միջոցների մուտքագրված չափով* | *անվճար* |
| | ▪ *անկանխիկ միջոցներից* | *0.40%* |
| | **Այլ արտարժույթով** | |
| | ▪ *հաշվին կանխիկ միջոցների մուտքագրված չափով* | *անվճար* |
| | ▪ *անկանխիկ միջոցներից* | *պայմանագրային, տվյալ օրվա* |

| | |
|---|---|
| | *սակագնով* |
| Ընթացիկ հաշվին կանխիկ գումարի մուտքագրում | |
| ▪ *ՀՀ դրամով* | *անվճար* |
| ▪ *ԱՄՆ դոլարով* | *անվճար* |
| ▪ *Այլ արտարժույթով* | *պայմանագրային, տվյալ օրվա սակագնով* |
| ՀՀ դրամից և ԱՄՆ դոլարից բացի այլ արժույթներով ներգրավվող ժամկետային ավանդի գումար | անվճար |
| Հնամաշ թղթադրամի փոխանակում | |
| ▪ *ԱՄՆ դոլար, Եվրո, Ռուսական ռուբլի* | *4.00%* |
| ▪ *Այլ արտարժույթ* | *պայմանագրային* |
| ***14.*** ***ՀՀ պետական պարտատոմսերի աճուրդներին մասնակցության սակագին*** | |
| Պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով (միջնորդավճարի չափը հաշվարկվում է միայն աճուրդին ներկայացված հայտի բավարարված անվանական արժեքով ծավալի նկատմամբ) | *մինչև 50 մլն ՀՀ դրամ — 5,000 դրամ + Օպերատորի կողմից գանձվող միջնորդավճար*<br>*50 մլն ՀՀ դրամից ավելի — 0.015%, բայց ոչ ավել, քան 30,000 դրամ+ Օպերատորի կողմից գանձվող միջնորդավճար* |

## Պայմաններ

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (հետագայում՝ Բանկ) իրավունք ունի փոփոխել սույն Սակագները և Պայմանները (հետագայում՝ Սակագներ)՝ այդ մասին պատշաճ կերպով ծանուցելով Ֆիզիկական անձանց (հետագայում՝ Հաճախորդ):

2. Սույն Սակագները սահմանված են Բանկի կողմից մատուցվող ստանդարտ ծառայությունների համար: Բանկն իրավունք ունի իր կողմից մատուցված ոչ ստանդարտ ծառայությունների դիմաց գանձել լրացուցիչ կամ Սակագներում չնշված այլ հատուցում, ինչպես նաև գանձել այդ ծառայությունների մատուցման համար փաստացի իրականացված հեռահաղորդակցման ծախսերը:

3. Բանկի կողմից կիրառվող Սակագները հաշվարկվում են ելնելով գործառնության գումարից և գանձվում են Բանկում վարվող Հաճախորդի բանկային հաշվից (հաշիվներից)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը հանձնարարական է տալիս գանձումները կատարել գործարքի գումարից:

4. Բանկի կողմից սահմանված Սակագները գանձվում են Հաճախորդի դրամային հաշվից: Հաճախորդի դրամային հաշվին Սակագների գանձման համար անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ դրանք գանձվում են հաշիվին մուտքագրված գումարից:

5. Արտարժույթով սակագները գանձվում են ՀՀ դրամով, հաշվարկված գանձման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքով: Թղթակից կամ այլ արտասահմանյան բանկերի սակագները Բանկն իրավունք ունի գանձել Բանկում վարվող Հաճախորդի այլ հաշիվներից:

6. Բոլոր ընթացիկ հաշիվները գործում են բազմարժութային ռեժիմով: Եթե Հաճախորդն իրականացնում է գործառնություններ արժույթով, որը տարբերվում է Բանկում վարվող հաշիվների արժույթներից, և որոնք կրում են պարբերական և/կամ հաճախակի բնույթ, ապա Հաճախորդն այդ արժույթով ընթացիկ հաշիվ է բացում:

7. Բանկի կողմից գանձված Սակագները վերադարձման ենթակա չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս գանձվել են սխալմամբ:

8. Փոխարկային և արժեթղթերով գործառնություններն իրականացվում են Բանկի տվյալ օրվա գնանշումներով՝ համաձայն Հաճախորդի հետ կնքված համապատասխան պայմանագրի:

9. Էսքրոու հաշվից գումարի կանխիկացման և/կամ փոխանցման կամ այլ գործառնությունների դեպքում կիրառվում են Հաշվի սպասարկման և/կամ փոխանցումների համար նախատեսված Բանկի համապատասխան սակագները:

# ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ուժի մեջ է 01.09.2020թ.-ից

| No. | Ծառայություն | Դրույքաչափ | Նվազագույն | Առավելագույն |
|---|---|---|---|---|
| *1.* | ***Միջոցների մուտքագրում Հաճախորդների հաշվին*** | | | |
| | Միջոցների մուտքագրում | անվճար | | |
| *2.* | ***Միջոցների փոխանցում Հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա*** | | | |
| | Ներբանկային | անվճար | | |
| | Միջբանկային | | | |
| | **ՀՀ դրամով** | **AMD 500** | | |
| | **ՀՀ դրամով Ինտերնետ-Բանկ, Բանկ-Հաճախորդ համակարգով** | **անվճար** | | |
| | **ԱՄՆ դոլարով** | | | |
| | ▪ *ծախսերի BEN փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000* | *AMD 45,000* |
| | ▪ *ծախսերի OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 7,500* | *AMD 45,000* |
| | ▪ *ծախսերի երաշխավորված OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 15,000* | *AMD 50,000* |
| | | | | |
| | **Եվրոյով** | | | |
| | ▪ *ծախսերի BEN փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000* | *AMD 45,000* |
| | ▪ *ծախսերի OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000+ երրորդ բանկի սակագին* | *AMD 45,000 + երրորդ բանկի սակագին* |
| | **Շվեյցարական ֆրանկով** | | | |
| | ▪ *ծախսերի BEN փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000* | *AMD 45,000* |
| | ▪ *ծախսերի OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 10,000+ 25 շվեյցարական ֆրանկին համարժեք ՀՀ դրամ* | *AMD 45,000 + 25 շվեյցարական ֆրանկին համարժեք ՀՀ դրամ* |

| | | | |
|---|---|---|---|
| **ՌԴ ռուբլով** | **0.10%** | **AMD 2,500** | **AMD 10,000** |
| **Անգլիական ֆունտ ստեռլինգով** | | | |
| ▪ *ծախսերի BEN փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5.000* | *AMD 45.000* |
| ▪ *ծախսերի OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5.000+ երրորդ բանկի սակագին* | *AMD 45,000 + երրորդ բանկի սակագին* |
| **Ճապոնական իենով** | | | |
| ▪ *ծախսերի BEN փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000* | *AMD 45,000* |
| ▪ *ծախսերի OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000+ երրորդ բանկի սակագին* | *AMD 45,000 + երրորդ բանկի սակագին* |
| **Չինական յուանով** | | | |
| ▪ *ծախսերի BEN փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000* | *AMD 45,000* |
| ▪ *ծախսերի OUR փարբերակի դեպքում* | *0.10%* | *AMD 5,000+ երրորդ բանկի սակագին* | *AMD 45,000 + երրորդ բանկի սակագին* |
| **Այլ արտարժույթով** | **պայմանագրային** | | |
| Առարկայազուրկ ոսկով փոխանցումներ | հաշվից՝ AMD 7,500 + երրորդ բանկի սակագին | | հաշվին՝ AMD 4,000 + երրորդ բանկի սակագին |
| Բանկի աշխատակցի կողմից վճարային հանձնարարականի լրացում (արտարժույթով) | AMD 2000 | | |
| | | | |
| Հաճախորդի կողմից թղթային լրացված վճարային հանձնարարականի ընդունում (արտարժույթով) | AMD 1000 | | |
| Դեպո հանձնարարականների կատարում | | | |
| ▪ *Պետական պարտատոմսերով* | *AMD 500* | | |
| ▪ *Այլ արժեթղթերով* | *պայմանագրային* | | |

Եթե փոխանցվող արժույթը չի համապատասխանում սպասարկվող հաշվի արժույթին, Բանկն իրականացնում է փոխարկային գործառնություն Բանկի տվյալ օրվա փոխարժեքներով՝ գնելով կամ վաճառելով Հաճախորդի համար փոխանցման հանձնարարականում նշված արժույթը:

Միջոցների փոխանցման սակագները չեն ներառում այլ/միջնորդ բանկերի սակագները: Այլ/միջնորդ բանկերի սակագները կարող են վճարվել թե՛ Հաճախորդի, և թե՛ Շահառուի հաշվից, համաձայնեցնելով Բանկի հետ

| | |
|---|---|
| ***3.*** | ***Փոխանցումների հետկանչման հարցումների ուղարկում կամ վավերապայմանների փոփոխում*** |

| | | | |
|---|---|---|---|
| Չկատարված փոխանցումների հետկանչման հարցման ուղարկում | անվճար | | |
| Կատարված փոխանցումների հետկանչման հարցման ուղարկում | | | |
| *ՀՀ դրամով* | *AMD 5,000* | | |
| *Այլ արփարժույթով* | *AMD 15,000* | | |
| Բանկը պատասխանատվություն չի կրում փոխանցումների հետկանչման հարցումների կատարման համար | | | |
| Չկատարված փոխանցումների վավերապայմանների փոփոխում | անվճար | | |
| Կատարված փոխանցումների վավերապայմանների փոփոխում | | | |
| ▪ *ՀՀ դրամով* | *AMD 10,000* | | |
| ▪ *Այլ արփարժույթով* | *AMD 15,000* | | |
| ***4.*** | ***Հարցումներ*** | | |
| Հարցում՝ Հաճախորդի հաշվին մուտքագրված միջոցների վերաբերյալ | | | |
| ▪ *ՀՀ դրամով* | *AMD 5,000* | | |
| ▪ *Այլ արփարժույթով* | *AMD 10,000* | | |
| Հարցում՝ կատարված փոխանցումների վերաբերյալ | | | |
| ▪ *ՀՀ դրամով* | *AMD 5,000* | | |
| ▪ *Այլ արփարժույթով* | *AMD 10,000* | | |

բ) Այն դեպքում, երբ հաշվի նվազագույն մնացորդը չպահելու համար գանձվելու են սակագներ և տուժանքներ, ապա հաշվի նվազագույն մնացորդի չափերը կամ նվազագույն մնացորդի հաշվարկման մեթոդը Բանկի կողմից չեն կիրառվում նվազագույն մնացորդը չպահելու համար սակագներ կամ տուժանքներ:

II. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ՝

ա) Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:
Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը տոկոսագումարների կանոնավոր կապիտալացումների դեպքում հնարավոր է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$APY = (1+r/n)^{n}-1$$

որտեղ՝ 1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

4) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է

5) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Օրինակ, 1,000.00 ՀՀ դրամը 733 օրով (տոկոսագումարը ամեն ամիս ստանալու պայմանով)

Բանկում որպես ֆիզիկական անձ 7.50% տարեկան անվանական տոկոսադրույքով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում, տարեկան տոկոսային եկամտաբերության չափը կկազմի `
APY = (1+.0.75/12)12 -1
APY = 0.077633*100=7.76%

բ) Բազային տարեկան տոկոսադրույքի չափը`

Ուժի մեջ է30.08.2021թ-ից

| Արժույթ | Ավանդի նվազագույն գումար | Ավանդի առավելագույն գումար | Տոկոսագումարի վճարում | Ժամկետ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 732 օր | 1095 օր |
| | | | | | |
| AMD | 10,000,000 | 30,000,000 | Ժամկետի վերջում | 6.00% | 6.50% |

գ) Կառուցվածքային ավանդի հիմնական առանձնահատկությունները.

- Ավանդի տոկոսադրույքը կախված է ավանդի հիմքում ընկած արժեթղթի գնի տատանումներից:
- Ավանդի հիմքում ընկած արժեթղթի գնի աճի դեպքում Ավանդատուն ստանում է բազային տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարի և Ավանդատուի մասնակցության գործակցով հաշվարկված արժեթղթի մաքուր գնի աճի հանրագումարը:
- Պայմանագրով սահմանված ժամկետի վերջում, Ավանդի հիմքում ընկած Արժեթղթի գնի աճի բացակայության դեպքում Հաճախորդը ստանում է միայն պայմանագրով սահմանված բազային տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարը:

դ) Տոկոսների կապիտալացման (compounding) և վճարման հաճախականությունը`
Բանկն ավանդատուից ավանդի դիմաց տոկոսագումար է հաշվեգրում` ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու օրվա նախորդ օրը: Ավանդի գծով հաշվեգրված տոկոսագումարի դիմաց Բանկը տոկոսներ չի հավելագրում: Յաշվեգրված տոկոսագումարի վճարումը կատարվում է ժամկետի վերջին աշխատանքային օրը կամ յուրաքանչյուր ամիս (համաձայն ավանդային պայմանագրի դրույթների) անկանխիկ` Բանկում ավանդատուի անունով բացված համապատասխան բանկային հաշվին մուտքագրելու միջոցով:

ե) Յաշվի այն մնացորդի հաշվարկման մեթոդը, որի նկատմամբ վճարվելու են տոկոսներ` Բանկում ներդրված ժամկետային ավանդի դիմաց տոկոսների հաշվեգրումը կատարվում է բանկային ավանդի փաստացի մնացորդի վրա: Բանկում առկա ընթացիկ հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է տոկոսագումար, եթե ամսվա ընթացքում հաշվի միջին օրական մնացորդն ըստ համապատասխան արժույթների կազմում է նվազագույնը 500,000 ՅՅ դրամ, 2,000 ԱՄՆ դոլար:

զ) Յաշվի այն մնացորդի չափը, որը պետք է պահպանվի խոստացված տոկոսները կամ այլ եկամուտները ստանալու համար, ինչպես նաև այդ մնացորդի հաշվարկման մեթոդը` Բանկում սահմանված են ֆիզիկական անձանց Կառուցվածքային ավանդների ներգրավման նվազագույն սահմանաչափ` 10,000,000 (տաս միլիոն) ՅՅ դրամ:

է) Այն ժամանակահատվածային պահանջները, որոնք անհրաժեշտ է պահպանել խոստացված տոկոսները կամ այլ եկամուտները ստանալու համար`

Ուժի մեջ է 30.08.2021թ.-ից

| Արժույթ | Ավանդի նվազագույն գումար | Ավանդի առավելագույն գումար | Տոկոսագումարի վճարում | Ժամկետ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 732 օր | 1095 օր |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| AMD | 10,000,000 | 30,000,000 | Ժամկետի վերջում | 6.00% | 6.50% |

ը) Կիրառելիության պարագայում տեղեկատվություն այն մասին, որ հավելագրված, սակայն դեռևս չվճարված տոկոսները չեն վճարվելու, եթե ավանդատուն մարման ժամկետից շուտ է պահանջում ավանդի գումարը՝ ավանդատուի պահանջով ժամկետից շուտ ավանդը վերադարձնելու դեպքում, Բանկը կատարում է վերահաշվարկ և վճարում տվյալ պահին գործող և Բանկի կայքէջում հրապարակված՝ Ավանդի արժույթով ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքին համապատասխան չափով հավելագրված տոկոսագումար (եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ): Այն դեպքում, երբ ավանդային պայմանագրով նախատեսված է ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքից ցածր կամ հավասար տոկոսադրույք, ապա Բանկը կատարում է վերահաշվարկ՝ ավանդի դիմաց վճարելով վերահաշվարկման համար պայմանագրով նախատեսված 0.0% տարեկան տոկոսադրույքը և ավանդի գումարից գանձելով արդեն իսկ վճարված տոկոսագումարները:

թ) Տեղեկատվություն անկանխիկ ներգրավված ժամկետային ավանդի գումարի կանխիկացման մասին՝ անկանխիկ ներգրավված ժամկետային ավանդի գումարի կանխիկացումը իրականացվում է բանկի ընթացիկ սակագներով:

ժ) Հայտարարություն այն մասին, որ Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսադրույքները՝ այդ մասին պատշաճ կերպով ծանուցելով հաճախորդին:

ի) Հայտարարություն այն մասին, որ ՀՀ-ում, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի, ֆիզիկական անձի կողմից ավանդի դիմաց ստացված տոկոսագումարից գանձվում է եկամտային հարկ՝ 10.00% դրույքաչափով:

լ) Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման և ստանդարտ ավանդից ստացվող տոկոսների հետ համեմատության օրինակ.

| | | |
|---|---|---|
| Կառուցվածքային ավանդի հիմքում ընկած պարտատոմսի վաճառքի ընթացիկ եկամտաբերություն /Դրույք/ | 8.60% | |
| Կառուցվածքային ավանդի բազային տոկոսադրույք ըստ պայմանագրի ժամկետի | Երկու տարի | Երեք տարի |
| | 5.00% | 5.50% |
| Ստանդարտ ավանդի տոկոսադրույք ըստ պայմանագրի ժամկետի | Երկու տարի | Երեք տարի |
| | 7.00% | 7.50% |

**Դրույքի նվազման ազդեցության գնահատում ըստ ժամկետների**

| Մասնակցության գործակից | Սկզբնական ներդրում | Դրույքի նվազում 1 տոկոսով | | Դրույքի նվազում 2 տոկոսով | |
|---|---|---|---|---|---|
| | | 2 տարի | 3 տարի | 2 տարի | 3 տարի |
| 0.5 | 100,000,000.0 | 115,834,251.50 ՀՀ դրամ | 122,890,640.60 ՀՀ դրամ | 122,636,570.10 ՀՀ դրամ | 129,584,431.90 ՀՀ դրամ |

| Դրույքի նվազում 1 տոկոսով | | Դրույքի նվազում 2 տոկոսով | |
|---|---|---|---|
| 2 տարի | 3 տարի | 2 տարի | 3 տարի |
| 7.63% | 7.112% | 10.74% | 9.023% |

| Ստանդարտ ավանդային պայմանագիր |
|---|

| Սկզբնական ներդրում | 2 տարի | 3 տարի |
|---|---|---|
| | 7.00% | 7.50% |
| 100,000,000.00 | 114,000,000.00 | 122,500,000.00 |

խ) Երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ընթացիկ հաշիվների համար գործող պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ծ) Բանկային ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

կ) Ելնելով Բանկի կողմից որդեգրած քաղաքականությունից՝ ավանդի հաշվում ավանդատուի անունով չեն կարող մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները:

հ) Ելնելով Բանկի կողմից որդեգրած քաղաքականությունից՝ Բանկը երրորդ անձի անունով ավանդ չի ընդունում:

Սույն կետում ներկայացված են տոկոսադրույքների և ժամկետների օրինակներ և դրանք կարող են չհամապատասխանել Բանկի կողմից տվյալ պահին գործող տոկոսադրույքներին և ժամկետներին:

III. Հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգի, պայմանների և սահմանափակումների, ինչպես նաև ավանդատուի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն.

Ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության, նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննության, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման և ֆինանսական միջնորդության ավելացման նպատակով, 02.08.2008թ. ուժի մեջ է մտել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը:

16. Ֆինանսական համակարգի հաշտարարը անվճար կարգով քննում է այն պահանջները, որոնք ներկայացվում են հաճախորդի կողմից Բանկի դեմ, կապված են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10,000,000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

17. Հաճախորդն իրավունք ունի դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրով նախատեսված է, թե ոչ: Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու հաճախորդի իրավունքը սահմանափակող համաձայնությունը կամ պայմանն օրենքով առ ոչինչ է:

18. Մինչև պահանջը Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելը հաճախորդը պետք է Բանկին ներկայացնի բողոք-պահանջ:

19. Բանկը պարտավոր է հաճախորդի կողմից բողոք-պահանջը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին գրավոր տրամադրել վերջնական պատասխան, որում պետք է հստակ արտահայտված լինի Բանկի դիրքորոշումը սպառողի պահանջը մերժելու, բավարարելու կամ մասնակի բավարարելու վերաբերյալ:

20. Բանկի վերջնական պատասխանը ստանալու պահից կամ 4-րդ կետով սահմանված ժամկետում այն չստանալու դեպքում հաճախորդն իրավունք է ձեռք բերում պահանջ ներկայացնելու Ֆինանսական համակարգի հաշտարարին:

21. Բանկը պարտավոր է քննարկել հաճախորդի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է 1 տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ հաճախորդն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

22. Ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է գրավոր պահանջը, եթե հաճախորդը պահանջ է ներկայացրել 6 ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ հաճախորդը ստացել է Բանկի վերջնական պատասխանը կամ 4-րդ կետով սահմանված ժամկետում վերջնական պատասխան չի ստացել:

23. Այն դեպքում, երբ պահանջը ենթակա չէ քննության, Ֆինանսական համակարգի հաշտարարը 7 աշխատանքային օրվա ընթացքում մերժում է պահանջի քննումը և այդ մասին գրավոր տեղեկացնում է հաճախորդին՝ նշելով մերժման հիմքերը:

24. Ֆինանսական համակարգի հաշտարարը պահանջը քննում և որոշում է կայացնում Բանկի բացատրությունները ստանալուց հետո՝ 14 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես բարդ գործի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է սույն կետով նախատեսված 14-օրյա ժամկետը իր որոշմամբ երկարաձգել ևս 14 աշխատանքային օրով:

25. Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է պահանջի քննությունն իրականացնել բանավոր լսումների և (կամ) փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության հիման վրա: Կողմերի կամ դրանցից մեկի խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ: Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է հրավիրել կողմերին՝ վերջիններիս բանավոր բացատրություններն ու պարզաբանումները ստանալու նպատակով: Պահանջի քննությունը բանավոր լսումների միջոցով իրականացվելու դեպքում կողմերը նախապես պատշաճորեն իրազեկվում են պահանջի քննության օրվա և վայրի մասին:

26. Պահանջի քննության արդյունքներով Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում պահանջը բավարարելու կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու մասին և նույն օրը այն հանձնում կողմերին կամ փոստով առաքում որոշմանը մեկական օրինակ:

27. Այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր: 30 աշխատանքային օրը լրանալուց հետո Ֆինանսական համակարգի հաշտարարը պարտավոր է Բանկին ծանուցնել հաճախորդի գրավոր համաձայնության առկայության կամ բացակայության մասին և համապատասխանաբար՝ որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու կամ այդպիսին չդառնալու մասին:

28. Այն դեպքում, երբ հաճախորդը օրենքով սահմանված կարգով համաձայնվում է որոշման հետ, իսկ Բանկը սահմանված կարգով և ժամկետում չի կատարում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, հաճախորդն իրավունք է ստանում կատարողական թերթ ստանալու նպատակով դիմելու իրավասու դատարան:

29. Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

30. Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը իրավասու դատարան կարող է ներկայացվել ծանուցումն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: